GRAMMAIRE - ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ LA CONJONCTION - ՇԱՂԿԱՊ

Նախադասություններ կամ նախադասության անդամներ իրար կապող (շաղկապող) բառերը կոչվում են շաղկապներ:

ա. Համադասական շաղկապներ - Conjonctions de coordination

Նրանք շաղկապում են նախադասության համազոր անդամներ կամ համազոր նախադասություններ.

և, ու, բայց, իսկ, սակայն, այնուամենայնիվ, այլ, կամ, այլև, նաև, ապա, ուստի, ուրեմն, այսինքն, նույնիսկ, մինչև իսկ, և ... և, թե ... թե, ոչ ... ոչ, ապա թե ոչ (եթե ոչ, թե չէ), ինչպես և, և այլն:

բ. Ստորադասական շաղկապներ - Conjonctions de subordination

Նրանք շաղկապում են երկրորդական նախադասությունը գլխավոր նախադասությանը.

Որ, թե, եթե, որպեսզի, որովհետև, թեև, չնայած (չնայած որ), թեկուզ, քան, մինչ, մինչդեռ, քանի որ, հենց որ, քանի դեռ, և այլն:

TEXTE Ուիլյամ ՍԱՐՈՅԱՆԻ ԲԵՂԵՐԸ

Մոսկվայի հյուրանոցի մեջ, Գուրգեն Մահարին, տեսնելով Ու. Սարոյանի անգլերեն գրքերը, հարցնում է.

– Ինչո՞ւ նկարներդ չեն դրել:

– Հայի բեղերից են վախենում: Բեղերս անգլիական չեն:

Երբ Գ. Մահարին Երևանում նորից հանդիպում է Սարոյանին, զարմանում է, որ նա բեղերի կեսը կտրել է: Ծիծաղելով նա հարցնում է.

– Զարմանալի մարդ ես, պատվական բեղերդ բերիր-հասցրիր մինչև այստեղ և Երևան մտար կարճ բեղերով:

Գրեթե բարկացած, Սարոյանը պատասխանում է.

– Օղուլ, ես իմ հայի բեղերով ամերիկացիներուն, ֆրանսացիներուն կրնամ զարմացնել: Այստեղ, Հայաստանի մեջ, որո՞ւն զարմացնեմ: Հայերեն չեմ գիտեր և հայու բեղե՞ր կը պահեմ:

EXERCICE

Կապել հետևյալ նախադասությունները շաղկապներով.

1. Նա գիտեր: Անձրև է գալիս: Անձրևանոցը չէր ուզում:
2. Նա չի ուզում խաղալ: Նա հիվանդ է:
3. Ես չգիտեմ ձեր անունը: Ես տեսել եմ ձեզ մի քանի անգամ:
4. Թվում է: Նա հոգնած է: Նա ուզում է գալ մեզ հետ:
5. Գայլը ձեռք չի տալիս (չի դիպչում) գառնուկին: Նա շատ սոված է: